ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

№ 3

ՏԱՐԵԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐ

Թաւրիզում . . . . . 14 դրան
Գաւառներում . . . 20 դրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 ռբ. 50 կ
Թուրքիա . . . . . 50 ղրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանկ
Ամերիկա . . . . . 2 տոլար 50 ս.

Յայտարարութիւնների վճարը՝
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Հոլովոյթ « » 5 »

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
«ՄԻՏՔ»-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ – ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրւում է գրեն պարզ, մաքուր և անպայման թղթի առա՝ յ երեսի վրայ։

2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու։

3. Մենք վերցնում ենք „ս“-ի և „վ“-ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը ապել մեր ընդունած ուղղագրութեամբ—ու—ովն։

4. Շտապուած կարճ յօդուածները չեն վերադարձնում։ Ուղարկուած և շտապուած երկար նիւթերը յետ ուսնալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը։

5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի իսկական անուն ազգանունը։

6. Բաժանորդները թերթ շտապ ալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ, հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն վերծ է համարում պատասխանատուութիւնից։

7. Շտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս։

8. Հասցէները փոխելու համար պէտք մեզ ուղարկել 2 դրան 10 շահի։

№ 3 1912 թ. ՇԱԲԱԹ 3 ՄԱՐՏԻ 1912 թ. № 3

ՈՒԺԵՂ ԻՆԽԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՔԸ*) II

Ամենից առաջ դիտենք, որ ոչ պատգամաւորական ժողովի բուն էութիւնն այն է, որ նա լինի ժողովրդի գիտակցական ընտրութեան արդիւնք։

Պատգամաւորութիւնը առանց ընտրութեան մի թիւրիմացութիւն է, հակասութիւն և անախրոնիզմ։ Ուրիշ խօսքով, ուր բացակայում է ժողովրդի գիտակցական, անբռնաղաս և իւրակամ ընտրութիւնը, այնտեղ արդէն պատգամաւորը ընտրեալ չէ, այլ նշանակեալ, ուրեմն ժողովրդի ներկայացուցիչ չէ, այլ՝ որոշ բանակի, որոշ թայֆայի։

Եւ, տարաբախտաբար, մեր անցեալ շրջանի պատգամաւորական ժողովը ճիշտ այդ կուրսի մարդկանց մի հաւաքածու էր, զուրկ ժողովրդական որևէ հանկամանքից։

Մեր հասարակական գործերի վարիչի կապալառուների մի խմբակ, որ ճարտար աճպարար է և ժիզուիտական վարպետութեամբ շլացնել ու շահագործել գիտէ «Ամեն ինչ ժողովրդով և ժողովրդի համար» բարձր ու դեմոկրատական սկզբունքը, այս անգամ ևս իր վեստն դրեց՝ յետ մղելու տեղացի և ժողովրդի մարդից, դիրքի տէր, փորձառու և գործի ընտրունակ անհատները։

Մեր ասածը հաստատելու համար բաւական է յիշել թէկուզ հէնց այն հանգամանքը, թէ ինչպէս կարճմիտ ու կուսակցամոլական քաղաքականութեամբ անտես էին առնուել Սալմաստում բուն Սալմաստեցիները, որոնց ականաւոր դէմքերը տարիներ շարունակ Թաւրիզում Վալիահդի, չարզուզարի և Նահանգապետի դռներ են մաշել իրենց համագիւղացոց կիւղատէրերի կեղեքումներից, հարկերից և այլ կարգի հալածանքներից փրկելու համար՝ իբրև ժողովրդի մարդիկ։ Յիշեցէք Մարաղում «պաղլոգով» մուրացուած 103 ստորագրութիւնները, որոնցով կապալառուները նպատակ ունէին Մարաղեցոց իսպառ անծանօթ մի անձի այդ շրջանի պատգամաւոր դարձնել։

Ընտրական գործն այնքան էին աղաւաղել և խաթարել «Ամեն ինչ ժողովրդով և ժողովրդի համար» բղաւողները որ ուղղակի Ուրմիում առաջացրին մի անմոռանալի սկանդալ։ Երբ առաջնորդարանից պահանջուեց, որ Ուրմին տայ մի երկրորդ պատգամաւոր, այնտեղ՝ կուսակցական ոստայններում թակարդուած, անգիտակ ու գործիք դարձած մասսան «ընտրեց» էլի նորան, որին արդէն, ըստ զակազի, ընտրել էր մի անգամ և մոռացել որ այդպիսի բան եղել է։

Միւս պատգամաւորներն էլ, շատ աննշան բացառութեամբ, այդպիսի զուտեշտական եղանակով էին ի պաշտօն կոչուել, մի պաշտօն, որից խրկուած էին ժողովրդի համակրելի մարդիկ։ Այս պատճառով իսկ, հէնց սկզբից բացուեց մի մեծ անջրպետ ժողովրդի, Թաւրիզեցոց և պատգամաւոր հռչակուածների միջև։

Սակայն կուսակցական պատգամաւորները այլ ևս մոռացել էին «ժողովրդին», նրա ձայնն ու համակրութիւնը և հրճւում էին իրենց յաղթանակով, թէ՝ արդէն բոլոր գործերի հեգեմոնիան իրենց ուժեղ ձեռքերումն է։

Յաղթանակողները կամ մեծամասնականները հէնց սկզբից խախտեցին կանոնադրութեան որոշկէտերը, որինդրժ-բախտաբար, համակերպեց հայր նախագահը և երկար էլ վայելեց նրա դառն պտուղները։

Թւում էր թէ յաղթանակողները, որոնք մի բանակի, մի ուղղութեան մարդիկ էին, համարւում ընդունակ կլինէին համերաշխ գործունէութեան։ Սակայն փորձը, փաստը ցոյց տուեց որ մեծ չափով համերաշխութիւն բացակայում էր դրսից միմիայն մի բանակի, մի ուղղութեան մարդիկ համարուող այդ պատգամաւորների մէջ։

Իրօք միայն մի անուն էր կապում այդ բանակի մարդոց, իսկզաղափարապէս, ուղղութեամբ՝ նոքա բաժանւում էին իրար անհաշտ և անգաղափարակից կողմերի։

Այդ բանակը բաժանւում էր երեք հատուածների, «ծայրայեղներ» կամ անիշխանականներ, չափաւորականներ կամ սակաւախօսներ, պահպանողականներ կամ խռովութեան սիրահարներ։

Եւ համարձակ կարելի է ասել, որ պատգամաւորական ժողովի ժամերը ըսպառւում էին «ծայրայեղների» և պահպանողականների անվերջ վէճերով։ Առաջինները մի երևակայական արշաւանք էին սկսել «բարձրից տրուած» կանոնադրութեան, կաթուղիկոսի ու առաջնորդի դէմ, պահպանողականները մնասակար էին հռչակում այդ տեսութիւնները, որոնց դրսում էլ տարածողն էր «ծայրայեղների» օրգան «Առաւօտը» [1]։

Փորրամասնութիւն կամ չէզոք կոչուածներն» էլերերւում և քարշ էին գալիս համակերպութեան ամօթալի քաղաքականութեան մէջ և չէր ստեղծւում զուտ ընդդիմադիրների մի խմբակ, որ ընդունակ լինէր ժողովը դնել գործնական հողի վրայ և մղէր նրան դէպի շինարար և ժողովրդօգուտ գործունէութիւն։

Մի ժամանակ յաղթանակով արբեցածները և ժողովրդական ընտրական քուէն աղաւաղողները նստաշրջանի սկզբից արդէն մատնուել էին անգործութեան. ընկել ծուղակը, ուրկից ելք չէին կարողանում գտնել։ Երկար խարխափումներից յետոյ, տրուեց թեմ. խորհրդի հաշուի քննութիւնը, որ հագիւ, այն էլ «Զանգի» հարուածների ներքոյ, շաբաթներ անցնելուց վերջ, բերուեց ժողովի։ Ընտրուեցաւ ուսումնական և կանոնադրութեան ծրագիր մշակող թայֆայական մի մասնաժողով, որ ցարդ էլ մընացել է անյայտութեան մէջ և հրապարակում «Հորիզոնում», այդ բանի մեղաւորն էլ առաջնորդը հռչակուեց։ Տրուեց տուրքի հարց, բայց մեր «ժողովրդի ներկայացուցիչները» չգիտենալով իրենց ընտրող շրջանների մարդոց կարողութեան և թուի չափը, մնացին անորոշութեան մէջ, կամ նշանակեցին այնպիսի տուրքեր, որ ցարդ էլ չեն գանձւում և առաջնորդարանը ապրում է ծանր պարտքերի տակ և դրամական տագնապների ժամերում։

Առաջնորդարանի շինութեան հարց առաջացաւ։ „Ծայրայեղները“ «մեզ առաջնորդ պէտք չէ» ասելով մէջ տեղից դուրս եկան, իսկ նոցա ընկեր չափաւորներն ու պահպանողականներն էլ լաւ զգալով որ ժողովրդի ընտրեալներ չլինելով՝ զուրկ են ժողովրդի համակրութիւնից և չեն կարող յուսալ նրա դրական օժանդակութեան վրայ, մնացին մենակ և գլխիկոր։

Եւ այսպէս՝ անկատար մնաց հարցը առաջնորդարանի շինութեան. առաջնորդարանի, որ իւր ներկայ խարխուլ և աւերակ դրութեամբ ուղղակի ծաղր է մեր Ատրպատականցոց ազգային արժանապատուութեան, առաջնորդի վեհութեան և 40000 հայ ժողովրդի հոգևոր ներկայացուցչի բարձր դիրքին։

Այս համառօտ տեսութիւնը պերճ ապացոյց է հակաժողովրդական և թայֆայամոլական այն աղէտալի քաղաքականութեան, որ նպատակ ունի կուսակցական գերիշխանութիւն առաջ բերելու, սպանելով ժողովրդապետական առողջ և կենսունակ սկզբունքը։

Թող այլևս անցեալը խրատ լինի մեզ հրաժարուելու այդպիսի խարուսիկ իլլիւզիաներից, որոնք վերջանում են մի տխուր հիասթափութեամբ և ազգային իշխանութեան դիրքը խախտելով։

Այն պատգամաւորները, որոնք ժողովրդից ընտրուած չեն, ժողովուրդն էլ չի լսի նրանց և այսպիսով աւելի ևս կթուլանայ մեր թեմական իշխանութեան, առանց այդ էլ, շատ թոյլ ոյժը։

Մեզ պէտք են ժողովրդի մարդիկ, փորձառու, դիրքի ու վարկի տէր մարդիկ, որ ոչ է հոգմի փչած ժամանակ՝ չաներեւոյթանան, այլ միշտ մնան անսասան իբրև ժողովրդի պաշտպաններ, իբրև բարեյոյս, վստահելի և տեղացի տարրեր, որոնց իւրաքանչիւր մի կոչին ընտրող ժողովուրդը պատրաստ կլինի արձագանք տալ։

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ՝ է արդէն բայքայուած և կազմալուծուած պատգ. ժողովն ու խորհուրդը շուտով լուծել և կատարել նոր ընտրութիւններ, հաստատելու ուժեղ մի իշխանութիւն, զօրացած ժողովրդի աջակցութեամբ։

Միայն ժողովրդի իսկական ներկայացուցիչները՝ կարող են լինել սրտացաւ պատգամաւորներ, ընդունակ՝ շօշափելի ու շինարար գործի։ Այդպիսիները միայն կարող են պատկառանք ազդել ժողովրդին, բարձր պահել առաջնորդարանի դիրքը թէ մեր և թէ օտարների առաջ, որոնց հետ մշտական յարաբերութեան մէջ է առաջնորդարանը։ Սորանից դուրս այլ կերպ մենք չենք կարող ունենալ զօրեղ իշխանութիւն, որի անհրաժեշտութիւնն ու բացը չափազանց կգալի է։

ՀԱՅԵՐԻ ԴԻՐՔԸ ՎՐԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ.[1])

Վրաց տարեգրութեան մէջ հայերի մասին առաջին անգամ լիշատակւում է այն ժամանակ, երբ պատմւում է այս երկու ազգերի քրիստոնէութիւնն ընդունելու պատմութիւնը մի ընդհանուր բիւզանդական աղբիւրից։

Հայերի և Վրացիների միմեանցից բաժանուելը տեղի է ունեցել Քաղկեդոնի ժողովում 451 [2] թուին։ Սակայն այս նորափթիթ հօտի անջատուելը յունական եկեղեցուց Վրաստանի և Հայաստանի մէջ եղած փոխադարձ յարաբերութիւնները որևէ թշնամական կերպարանք չտուեց, նոյնիսկ Վրաց թագաւորութեան մի նահանգում՝ Սոխմեթիայում հայ լուսաւորչական կրօնի դաւանանքը անարգել կեր-

* Տես «Միտք» № 2

[1] Տես «Առաւօտ» № 131-առաջնորդողը։

[1]) Տես «Միտք» № 2

[2]) Վրաց բաժանումը հայերից տեղի է ունեցել 606—607 թուերին։ Խմբ.

պով պահպանուեցաւ։ Այո՛, ճշմարիտ է, որ ապարդիւն անցան Հայոց և վրաց եկեղեցիները միացնելու փորձերը, որ տեղի ունեցան վրաց Բագրատ Դ. (958—994) և Դաւիթ Վերանորոգողի (1089. 1125) թագաւորների օրօք. սոյնանման փորձեր կատարուեցան նոյնպէս Թամարա թագուհու ժամանակ, որի միջնորդը հանդիսացաւ քաղաքական և եկեղեցական օրէնքների ժողովածուի հեղինակ Մխիթար Գօշը, այսուամենայնիւ այս երկու ազգերի նախկին բարեկամական կապերը անխախտ մնացին։ Դաւիթ Վերանորոգողի ժամանակ հայերը մտան Վրաց կառավարութեան հովանաւորութեան ներքոյ։ Այս թագաւորը, օգտուելով Խաչակրաց արշաւանքներից դէպի Փոքր Ասիա, Վրաստանն ազատեց Սելջուկ թուրքերի տիրապետութիւնից, վերցրեց Անին Հայաստանի մայրաքաղաքը, և ի նկատի ունենալով աւերեալ երկրի տնտեսական շահերի բարձրացնելը, հայերին տեղափոխեց Վրաստան՝ բնակեցնելով յատկապէս նրանց համար շինուած կամ երեսի վրայ ձգուած քաղաքներում։ Վրաց տարեգիրը և հէնց իրանք հայ մատենագիրները, օրինակ Մատթէոս Եդեսացին, միաբերան վկայում են, որ Դաւիթ թագաւորն այնպիսի մեծ սիրով և կրօնական համբերատարութեամբ էր վերաբերուում դէպի հայերը, որ ինքը յաճախում էր նրանց եկեղեցիները և օրհնութիւններ ընդունում հայ եկեղեցու հովուապետներից։

Հայերի կրօնական ազատութիւնը ոչ թէ միայն չենթարկուեցաւ օրևէ սահմանափակումների, այլ նրանց տրուեցան քաղաքական և քաղաքացիական կատարեալ արտօնութիւններ։ Վրաց կառավարութիւնը միշտ ընդառաջ էր գնում հայ ժողովրդի իրաւացի պահանջներին, կարիքներին, որոնք ապրում էին գիւղերում վրացիների հետ միասին։ Վրաստանի այն հայերը, որոնք ապրում էին քաղաքներում, վայելում էին որոշ ինքնավարութիւն, և ունէին այնպիսի բացառիկ առաւելութիւններ, որ այլ օտարազգիները չունէին։ Այսպէս, դատարանական իրաւասութեան նկատմամբ նրանք ենթարկուում էին այն պատիժներին, տուգանքներին և քննութիւններին, որոնք գոյութիւն ունէին ԺԲ դարուայ հայ իրաւաբան Մխիթար Գօշի «Օրէնքների գրքում», որ թագմանուած էին վրացերէն և յետագայում տեղ էին գտել «Վախթանգ Զ-ի օրէնքների գրքում»։ Վարչական և զինուորական պատասխանատու պաշտօնները անխտիր կերպով յանձնուում էին թէ հայերին և թէ վրացիներին, որոնք կարողանում էին իրանց ընդունակութիւնները կառավարութեան նպատակներին համապատասխանող գործունէութեան շրջաններում երևան բերել։ Այսպէս, Սոխմեթիայում մելիքները, կառավարիչները կամ կուսակալները բացառապէս հայ նշանաւոր ընտանիքների ներկայացուցիչներից էին նշանակուում։ Թամար թագուհու ժամանակ հայ Զաքարէ Մխարգելին վրաց գահի ամենամօտիկ և ազդեցիկ խորհրդատուն էր և լիազօր զօրապետ Փոքր Ասիայում և Պարսկաստանում տեղի ունեցած այն անընդհատ՝ բայց յաղթահար պատերազմներում, որ վարում էր ժողովրդի յիշողութեան մէջ միշտ թարմ մնացած թագուհին։ Թիֆլիզեցի յայտնի հայ վաճառական Աբուլասանը, որ առևտրական ձեռնարկութիւնների պատճառով ճանապարհորդել էր զանազան երկրներում, վրաց նախարարներից և հոչակաւոր անձնաւորութիւններից կազմուած մի ժողովում, որին ինքը նախագահում էր, իւր վճռական ու ազդեցիկ ձայնով որոշում կայացրեց խնդրել դեռափթիթ Թամար թագուհուն, որ դեռ աղջիկ՝ իւր հայը Գէորգի Գ-րդի մահուանից յետոյ վրաց գահն էր բարձրացել, ամուսնանալու ռուս Անդրէյ Բոգոլիւբսկիյ իշխանի որդու հետ, որ անունը Իրիյ էր։ Այս ամուսնութիւնը իսկապէս տեղի ունեցաւ, սակայն շուտով մի քանի թիւրիմացութիւնների պատճառով ռուս իշխանը, կարճ ժամանակ Վրաստանում մնալուց յետոյ արտաքսուեցաւ Յունաստան։

Լ. Գէորգեան

Ռուսերէնից (Շարունակելի)

ԲԱՆԱՍՏԵՂԾ Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(30 ամեայ յոբելեանի առթիւ)

«Միայն սէրը միշտ կը մնայ
Իմ սրտումը կենդանի»

Երիտասարդական վառ երևակայութիւնն ու ինչ որ անորոշ, բայց քաղցր տենչանքներով լեցուն բաբախող սիրտը իրենց անդրանիկ նուէրը տալիս են Սիրոյ Աստուածուհուն. հազար երանգ բուրաւէտ ծաղիկներից հիւսած պսակ են ձօնում նրան։ Երանելի՛ ժամանակ, երբ բանաստեղծի կրծքի տակ, ինչպէս Շանթն է ասում,

Բան մը կը ճըմլէր թեթեւ.
«Անկանոն շունչ արագ կը հեւար
Ու սիրտս ամուր մուրճի մը նման
Զարկ կուտար պինդ-պինդ կատաղեր էր ան,
«Ուրիշ նոր բան մը հոգիս էր թափեր,
Նոր բան մը ճըմլող, թարմ ու դուրեկան»։

Եւ մատաղ երգիչն զգում է այդ «Նոր բանը», զգում է և հարց տալիս միամտութեամբ. «Այս ինչ է արդեօք, ով կոյս նազելի, մի՞թէ սէր արդէն...» (38 [1])։ Անշուշտ բանաստեղծը գիտէր սիրոյ զօրութիւնը, գիտէր, իհարկէ, ռոմաններից ու այլ գրքերից, գիտէր, որ սէրը մի «աստուածեղէն կայծ» է, որ նա ընդունակ է վառել արիւնը, խռովել հոգին, արցունքի շիթեր փայլեցնել աչքերում. գիտէր, բայց և մի բուռն պա-

[1]) Փակագծի մէջ նշանակում եմ երեսները 1908-ի տպագրութեան, Վաղարշապատ։

հանջ էր զգում ճաշակելու «թոյնն ու մեղրը» սիրոյ։ Եւ որքան խորնէ, ուժեղ այդ սէրը. բայց և որքան պատկերաւոր նրա արտայայտութիւնը. երգիչը մերթ ցանկանում է որպէս յստակ ցող ոռոգել սիրուհու երեսը, մերթ իբրև հովասուն սօսի հովանի լինել նրա սիրուն դէմքին, մերթ ինչպէս քաղցրաբոյր մի վարդ զարդարել նրա գեղեցիկ կուրծքը, մերթ ոսկեվառ գօտի լինել և փարել, փաթաթուել նրա չքնաղ իրանին, մերթ իբրև լուսնի փայլ շոյել նրա մազերը. գգուել այտերը, համբոյրներ դրոշմել դողդոջ շրթունքին, մերթ. իբրև նրա ձեռքին գերի, վանգակում փակուած սիրահար սոխակ՝ ականջին հնչել հրաշալի նուագ. մերթ... վերջապէս տեսնել նրան իբրև աստուածուհի—Անահիտ և երկրպագել առաջին չքած (5)։

Երկրպագել..., բայց մի՞թէ կարող է գոհանալ երգիչը երկրպագելով, թող լինի այդ սէրն իդէալական, թող նրա սիրոյ օբիեկտը լինի մի անհասանելի երկնային էակ, մի գերբնական արարած, այնուամենայնիւ երգիչը կը ցանկանայ հասնել նրան, խօսել—խօսեցնել. կը խնդրի, կաղաչի, կըպաղատի նրան, թոյլտուութիւն կաղերսի արևելեան գունաւորմամբ. կամ մեր միջնադարեան տաղերգների ձևով։

«Իրաւունք տուր՝ ծծեմ մեղրը շրթունքիդ,
Քաղեմ կարմիր այդ վարդերը թշերիդ,
Ով որ առնի հոտը շամամ ծծերիդ.
Էլ կարող է, թէ մի գին տայ իւր կեանքին» (35)

Էլ ինչ գին, մի՞թէ կարելի է գին սահմանել այդպիսի կեանքին. մանաւանդ երբ բանաստեղծը գործ ունի այնպիսի աննման էակի հետ, որ երկնային հրեշտակի նմանութիւն ունի։

Ոչինչ աշխարհում չի կարող համեմատուել այդպիսի էակի հետ. ոչ թէ այդ երկնանման էակի, այլ նրա լոկ մի ժպտի հետ անգամ չի փոխի բանաստեղծը ամբողջ աշխարհը.

«Մի ժպտիդ համար ես կհրաժարուեմ
Առանց զգալու բոլոր աշխարհից»։
Ո՛չ փառքը նորա՝ ոչ անարգ ոսկին
Գրկախառնութեանդ և ոչ մի վարկեան
Շրբէք չեն արժի...(87)։

Անգնահատելի է այդ կեանքը, այդ վիճակը. ո՛չ միայն այդքան, նոյն իսկ այդ վիճակում, այդպիսի դրութեան մէջ գըտած մահն անգամ բարձր է սովորական կեանքից.

«Թող ապրշում մազերովդ ինձ կախ տամ,
Բնաւ մի կեանք էլ չի հասնի այդ մահին» (35)։

Եւ զարմանալի էլ չէ, որ բանաստեղծը ցանկանում է օրեր ու տարիներ անցկացնել անուշ պատրանքով այդպիսի վիճակում։ Սակայն անագորոյն աշխարհը, պրոզաիկ իրականութիւնը չէր կարող հաշտուել և յարմարուել բանաստեղծի պատկերացումներն ու հոգեկան պրումներին, դրա համար հարկաւոր և անհրաժեշտ է մի այլ աշխարհ, մի իդէալական վայր, «... ուր խնդութիւն, ուր սէրն՝ միշտ անթառամ»։ Եւ երգիչը տենչում է սլանալ այդ երկնային դրախտը, ուր կարող կը լինի ծծել անվերջ և անլաց բնութեան հրապոյրը, սիրոյ անհուն քաղցրութիւնը (10)։

Բայց մի՞թէ միմիայն արտաքին գեղեցկութիւնը կարող է ալեկոծել երգչի հոգին, հաճելի գրգիռներ ու անուշակ յուզումներ զարթեցնել նրա մէջ։ Մի՞թէ մեղրանուշ շրթունքները, ծով-ծով աչքերն ու ոսկեթել վարսերը միայն՝ կարող կլինեն կազմել կորիզը, էութիւնը բանաստեղծի իդէալական սիրոյ—անշուշտ ոչ։ Արտաքինը, ֆիզիքականը տեսական հրապոյր ունենալ չի կարող. բանաստեղծին գրաւողը, դիւթողը աւելի բարձր աւելի վսեմ—ներքին, հոգեկան գեղեցկութիւնը պիտ լինի, ներդաշնակօրէն ձուլուած ու զուգորդուած արտաքին կատարելութեան հետ։ Եւ իրօք, բանաստեղծը սիրում է իր «մաքրութեան տիպար սուրբ գեղեցկութեան անարատ հրեշտակին» ոչ թէ նրա (աւելի ճիշտ կըլինէր ասել ոչ միայն) վառ աչքերի, վարդ այտերի, նազուք շրթունքի», այլ նրա «անմեղութեան, անբիծ հոգու, սիրոյ, ջերմ և անխարդախ սրտի, մանկութեան հաւատի» համար։ Ահա թէ ինչ յստակութիւններ է փնտրում երգիչը իր աստուածուհու մէջ, ինչ կուռքերով զարդարում իր սրբազան տաճարը. ահա բանաստեղծի սրբութիւն սրբոցը, որի առջև երկրպագութեան սեղան կանգնելով՝ «հայուէ ու զմուռս, կնդրուկ սրբազան» փտ ձօնէ։

Նորայր

Կը շարունակուի

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Հազարամեայ Չինաստանը այդ խորհրդաւոր վիշապը-վերջապէս փոխեց իր հին կաշին։ Երեք ամիս շարունակ կռուելով յեղափոխութեան դէմ, Թագուհին իր դեռահաս Բողդիխան Պուի անունից իր ժողովրդին ուղղած մի հրովարտակով հրաժարուում է նախապապերի գահից և Չինաստանը, երեք հազար տարուց աւելի միապետական և անսահման կառավարութիւն մնալուց յետոյ, դառնում է հասարակապետութիւն։

Հասարակապետական երկրներում ընդհանրական հասկացողութեամբ միապետը հրաժարուելով գահից, այլ ևս իրաւունք չունի խառնուելու տէրութեան յետագայ բախտի մէջ և ժողովուրդը ինքը պիտի ընտրէ իր երկրի համար կառավարիչ և կառավարելու որոշ ձև, մինչդեռ Չինաստանի կայսրը թէպէտ և հրաժարուում է կամովին գահից, բայց այնուամենայնիւ ինքն է պետական կառավարութեան ձևի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի՞ՆՉՊԷՍ ԵՆ ԽՆԱՄՈՒՄ ԽԵՆԹԵՐԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ *)

Մեր հիւանդանոցը ծախք էր անում տարեկան 400,000 տոլար։ Բժիշկների և ծառայողների ռոճիկներն էլ այս հաշուի մէջ է։ Սա շատ մեծ գումար է, երբ նկատի ունենանք, որ ամբողջ նահանգի բնակչութեան թիւը 500,000-ի չի հասնում։ Խենթերին հագցնում են հասարակ մոխրագոյն կտորից կարած հանդերձանք։ Եթէ մի խենթ փորձում է փախչել հիւանդանոցից՝ վրայի շորերից ճանաչուելով նա շատ շուտ է բռնուում և էլի յետ բերուում խենթանոց։ Այս անգամ անշուշտ նա աւելի խիստ հսկողութեան է ենթարկուում, և վայելած ազատութիւնն ու առանձնաշնորհութիւնները կրճատուում, կամ բոլորովին վերանում են։

Հիւանդանոցը ունի կովեր, եզներ, կառքեր, պարտէզ, արտեր, փռուն, խոզանոց, մեծ դեղատուն, և ծաղկանոց, կամ տաք-տուն (hot-house)։ Վերջինս այդպէս է կոչուում, որովհետև ձմեռը ծածկում են ապակեայ պատերով և առաստաղով և տաքացնում են (արեգակի տաքութեան փոխարէն) շոգիով։

Հիւանդանոցին կից կայ նաև երկու ուսումնարան, դարձեալ պետական ծախքով։ Այս ուսումնարաններում պահում են նահանգի բոլոր ադքատ, որբ և ապօրինի ծնուած տղերքին և աղջիկներին։ Նրանց կրթելուց բացի, ապագայում անկախ անելու համար՝ սովորեցնում են նաև մի քանի արհեստներ—կօշկակարութիւն մեղուաբծութիւն, հացթխութիւն, խոհարարութիւն և զինուորականութիւն։ Աղջիկներին սովորեցնում են կար ու ձև, խոհարարութիւն, և հիւանդապահութիւն։ Այս արհեստները սովորեցնելու համար ունեն առանձին-առանձին արհեստանոց իրենց վարպետներով։ Զինուորականութիւնը սովորեցնում է կառավարութեան կողմից նշանակուած յատուկ մի զինուորական սպայ։ Գրաշարութիւնը սովորում են հիւանդանոցի տպարանում, ուր լոյս է տեսնում ամիսը երկու անգամ մի թերթ—Howard Times—որ խենթանոցի և պետական բոլոր չէնքերի պաշտօնական օրգանն է։ Թերթի խմբագրապետն էր տեսչի տիկինը, իսկ նրա աշխատակիցները հիւանդանոցի օգնական բժիշկները։ Հիւանդանոցի համար պէտք է եղող բոլոր շորերն ու կօշիկները կարուում են աշակերտների ձեռով վարպետների հսկողութեան տակ։

Խենթանոցը բաղկանում է տասներկու զատ զատ չէնքերից, արական և իգական բաժինները ջոկ ջոկ։ Խենթերը հեռու են իրարից 500 քայլից մինչև կէս մղոն։ Կան եօթը բժիշկներ և 200 ծառայողներ (տղամարդ և պառաւած ամուսնանալուց յոյսը կտրած օրիորդներ)։ Հեռաւոր չէնքերում հիւանդներին այցելելու համար բժշկի սրամադրութեան տակ է խենթանոցի կառքը։

Հիւանդների թիւը հասնում է հազարի։ Շաբաթական 3—5 հոգի նոր խենթեր են ներս ընդունուում, և այդքան էլ ազատ արձակուում որպէս առողջ, բժշկուած։ Տարուայ մէջ այդպիսի առողջ համարուողների թիւը հասնում է 100 150 -ի։ իսկ ներս ընդունուողների թիւը 200-250 -ի։ Սրանից երևում է որ մէկ տարուայ մէջ խենթացողների թիւը—միջին հաշուով բժշկուածների թուից աւելի է 100-150-ով։ Տարուայ ընկզբին, երբ ես նոր էի ստանձնել պաշտօնս, որպէս խենթերի բուժիչ, թիւը 980-էր, վեցամիս վերջը բարձրացաւ 1018-ի, չնայելով որ դեռ շատերը ազատ էին թողնուած որպէս առողջացած։ Այս թիւը ներկայացնում է թէ մարդկանց և թէ կանանց։

Համեմատութիւնը երկու սեռի մէջ գրեթէ հաւասար է, թէև մէկը կամ միւսը 10-30 հոգով աւելի է լինում երբեմն։ Այս ելևէջը—ուրիշ պատճառներից զատ, որքան ես կարողացայ գիտել, գոյայ որ կախում ունի նաև տարուայ եղանակներից։ Ոչ միայն չորս եղանակներից, այլ նոյն իսկ օդի փոփոխութիւնից իրար յաջորդող ամիսների մէջ։ Ես նկատեցի որ ցուրտ, ամպոտ, քամոտ շաբաթներում աւելի հիւանդներ էինք ընդունում հիւանդանոց, քան թէ տաք, պայծառ, արևոտ օրերում։

Դր. Յակոբ Մել. Վարդանեան

(Կը շարունակուի)

*) Տես «Մի՛տք» № 2

որոշողը և հրահանգներ տուողը հանդիսանում Իւանշիկայի—չինական պետական կանցլերի—միջոցաւ։

Թէ որքան հիմնաւոր կլինին այդ տեսակի ի վերուստդրուած հասարակապետութեան հիմքերը, այդ ապագան ցոյց կտայ. եթէ միապետք իրաւունք ունի հասարակապետութեան ղեկավար հանդիսանալ, ուրեմն և լիազօր կլինի մի փառաւոր օր նորից իրան հուչակել նախկին «երկնքի որդի» և անսահման տէրը դառնալ «երկնային պետութեան»։ Մօտիկ ապագայում ժողով է կայանալու Պեկինում կամ Նանկինում սրոշելու կայսեր և կայսերական տան իրաւասութեան սահմանը և միևնոյն ժամանակ հիմնական ծրագիր մշակելու երկրի մէջ հասարակապետական կարգեր մտցնելու։ Եթէ չինական ժողովուրդը գոհ մնալ կայսեր տուած ողորմութեամբ, այն ժամանակ հասարակապետութիւնը կներկայանալ մեզ ոչ բոլորովին ապահովուած։ Եապոնիայի Մէյ կադօի օրինակը, որին խորամանկօրէն հետևում է ներկայ չինական կայսրը Իւանշիկայի թեղագրութեամբ, գիտակից մասայի կողմից լուրջ կասկածների տեղիք է տալիս։ Եթէ 1867 թ. Ճապոնիայում յեղափոխութիւնը հիմք դրեց այդ երկրի արագ վերածնման գործին, Չինաստանի համար միապետութեան վերականգնումը կարող է առաջ բերել քաղաքական և տնտեսական բէակցիա։ Դժուար է նախագուշակել՝ թէ ներկայ Չինաստանի հասարակապետութիւնը կամ արդեօք երկրի վերածնութեան համար վաղուց սպասուած բարիքը։

Եթէ Չինաստանը մտնի Եւրոպական քաղաքակիրթ ազգերի ընտանիքի մէջ և լրջութեամբ հետևի Եւրոպական առաջադիմական կեանքին, այն ժամանակ ոչ հեռու ապագայում «դեղին վտանգը» արգարև կսպառնայ Եւրոպային իր կուլտուրական, տնտեսական և զինուորական ուժով։

Երկնային պետութիւնը դէն է ձգել իրանից իր հին մաշկը, նա շարժւում է, վերածնութեան նշաններ է ցոյց տալիս։ Բազմամիլիոն ժողովուրդները բուռնցք են բարձրացրել, և հաւանօրէն հարուածներից շատերը տիպուած կլինի կրել Ռուսաստանը։ Նա աշխրջութեամբ պիտի հետևի երկրի ընթացքին և համապատասխան միջոցներ ձեռք առնի։

Ն. Է.

ԿԱՄՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ[1]

Անցեալ համարում մենք պարզաբանեցինք կամքի ազատութեան կողմնակիցների գլխաւոր հայեցակէտերը, այժմ տեսնենք թէ ինչ է ասում դետերմինիստների, այսինքն կամքի ազատութիւնը բացասողների հայրը, անգլիացի փիլիսոփայ Թոմաս Հոբբէսը. նա ասում է, «որ մեր ամեն մի զգացողութիւնը ամեն մի ցանկութիւնը ամեն մի միտքը, արդէն վաղուց որոշուած, պատճառաբանուած ու հաստատուած է։ Այն բոլոր ապաւորութիւնները ինչ որ մենք ընդունում ենք արտաքին աշխարհից, այդ հենց կազմում է մեր հոգին, այլապէս ասած՝ մեր ներքին կեանքը ոչ այլ ինչ է, բայց եթէ ապաւորութիւնների հաւաքածու։ Հետևաբար բոլոր մեր զգացողութիւնները, ցանկութիւնները, գաղափարները և այլն և այլն արդիւնք են այն բոլոր ապաւորութիւնների, որոնք ամբարուել, կուտակուել են անհատի մէջ ժամանակի ընթացքում. և որ մեր հոգեկանը գումարում է մեքենայօրէն, ուղեղի որոշ շարժողութիւնն է, որ մեխանիզմի օրէնքների հիման վերայ, մեր գլխում առաջ է բերում որոշ մտածողութիւնները ու գաղափարներ։ Ուրեմն պարզ է, որ մարդու կամքը ազատ, ինքնուրոյն լինել չի կարող։ Եւ այս բոլորից յետոյ Թոմաս Հոբբեսն աւելացնում է, որ եթէ մարդիկ իրենց միշտ մխիթարուած ու ազատ են զգում, պատճառն այն է, որ աշխարհիս երեսին կամքի ազատութիւն ասած բանը չկայ ու դորա համար էլ չպէտք է «չ տրտնջալ և սչ էլ ուրախանալ։ Այս երկու հայեցակէտների ընդհանուր համառօտակի պարզաբանութիւններից յետոյ, մենք կուզենայինք եզրափակել, առաջ բերելով մեր անհատական կարծիքը այդ հարցի վերաբերմամբ։

Ի նկատի ունենալով այն գլխաւոր հանգամանքը, որ մարդը ներկայանում է որպէս հասարակութեան անդամ և գործում է յօգուտ նոյն հասարակութեան և որ նա իւր գործունէութեամբ արժանանում է հասարակութեան կողմից գովասանքի կամ պախարակման, ուրեմն բնականաբար հարց է առաջ գալիս. «մարդ ինչպիսի պայմաններում միայն պատասխանատու է իւր ամեն մի քայլի համար»։

Ահա մի հարց, որին ձգտել են բոլոր բարոյագէտները և պիտի ձգտենք մենք։ Կամքի ազատութիւնը մի այնպիսի անհրաժեշտ պահանջ է անհատի համար իր բոլոր գործունէութեան ժամանակ, որից եթէ նա խուսափի, գործած կլինի մի մեծ չարիք ընդհանուր համամարդկային առաջխաղացութեան աեսակէտից։ Հոգեբանօրէն՝ բուն պատասխանատուութեան նշանակութիւնը կայանում է հէնց նսրանում, որ մարդս ազատ պիտի լինի մի գործ կատարելիս, անկախ արտաքին աշխարհի այլ և այլ պայմաններից. իր գործունէութեան գլխաւոր դրդիչ ոյժը ոչ թէ բնութիւնը պէտք է համարել, այլ իր բնաւորութիւնը. որովհետև ամեն մի անհատ ունի իր որոշ ուրոյն հոգեկան առանձնայատկութիւնները, որ զանազան պարագաներում զանազան եղանակներով է արտայայտում։ Փոխիրբնաւորութիւնդ և դու կտեսնես որ փոխւում է և քո գործունէութեան ձևը։

Բացի բնաւորութիւնից մենք առաջ կբերենք և «Ես»-ի գիտակցութեան գլխաւոր ֆակտորը, որը նոյնպէս իր հերթին գալիս լրացնում է մարդու ազատ լինելը։

Երբ ես ասում եմ, որ ես գործեցի այս ինչ գործը, այստեղ «Ես»-ը պատկերանում է իմ առաջ մի որոշ անուն, որոշ ազգանուն, որոշ արտաքին տեսք։ որոշ հասարակական դրութիւն, որոշ անցեալ, որոշ բնաւորութեան առանձնայատկութիւններ և այլն, որոնք գործում են, դեր են խաղում գործողութեան ժամանակ, իսկ այս վերոյիշեալ յատկութիւնների հաւաքածուն, ոչ այլ ոք է քան եթէ մարդը։ Ուրեմն պարզ է, որ մարդը ազատ է գործելու համաձայն իւր իդիալի, համաձայն իւր գաղափարների որից առաջ է գալիս մարդու կամքի ազատութեան վեհ գաղափարը։

Վահան

ՓՈՔՐԻԿ ՖԵԼԻԵՏՕՆ

ՀԱՅԸ ԵՒ ԱՆԳԼԻԱՑԻՆ

—Օհօ, անշուշտ կը բացականչի ընթերցողը այս ֆելիետօնի վերնագիրը կարդալիս,—հայը և անգլիացին, ասել է թէ մոծակն ու փիղը, լուն ու ուղտը. հայը ոռտեղ, անգլիացին ոռտեղ, մինթէ կարելի է այս երկուսին համեմատել իրար հետ։ Մէկը Եւրոպացի, միւսը Ասիացի, մէկը ազատութեան հոգով ու շնչով սընուած, մեծացած, միւսը օրօրոցի կապանքներից սկսած մինչև իր կեանքի վերջը ստրկութեանկապանքներովկաշկանդուած, մէկը հրամայող ծովի և ցամաքի, միւսը չոթքի և գծուծ հաշիւների։

Անգլիական ժողովրդի նշանաբանն է «Liberty and property»—ազատութիւն և սեփականութիւն։

Հայ ժողովրդի նշանաբանն է՝ «սեփականութիւն և սեփականութիւն»։

Անգլիացիները ընդհանրապէս, որպէս ընդունուած է ասել «սառը մարդիկ են». բայց տեղը եկած ժամանակ երևելի կատակաբաններ։

Բայց հայի համար ինչ կարելի է ասել.—եթէ հայը փող ունի՝ համ սառն է, համ տաք, համ զուարճախօս, համ ուրբաթախօս մի խօսքով բոստանի թաղ։

Մենակ հայերը չեն որ փող ու հարստութիւն են սիրում. անգլիացիները այդ կողմից մեզանից անցել են. օրինակ՝ անգլիացու առաջին հարցը նոր ծանօթի հետ լինում է այս թէ՝ «որքան կարողութիւն ունիք»։

Անգլիացին շատ չի սիրում խօսել. նա ձեզ հանդիպելիս բաւականանում է միայն «How do you do»[1] և խորասուզւում է իւր մտքերի մէջ. դուք ինչի մասին ուզում էք՝ խօսեցէք, բայց ոչ երկար ժամանակ, որովհետև նրա համար «ժամանակը ոսկի է»։ Նա քաղաքավարութեան վնասները շատ լաւ զգում է, ուստի և իր ժամանակին, թէկուզ պատմութեանդ ամենաքաղցր տեղում, նա վեր կրկենայ, «մնաս բարև» կասի ու կըգնայ իր գործին։

Իսկ հայը ինչ կանի, երբ իր ծանօթին պատահի։ Դեռ օխտը պորտից հարց ու փորձ կանի, կպրծնի, նորից կսկսի հարց սա փորձ անել, կնստեն ժամերով կխօսեն և եթէ երկուսն էլ բան ու գործ ունենան, կթողնեն ու «գեալաչիով» կըգբաղուեն. իսկ երբ իրարից բաժանուեն՝ կսկսեն իրանց մտքում իրար հայհոյել, որ բան ու գործից զրկուեցին։

Անգլիացու երեսին շատ քիչ անգամ ժպիտ կտեսնես. իսկ ծիծաղը հազուագիւտ բան է. բայց եթէ անգլիացին ծիծաղեց, նա այնպէս բարձրաձայն ու լիքը բերանով կծիծաղի, որ պատերը կըդողան։ Այն սրամտութիւնը կամ պատկերը, որ անգլիացուն կծիծաղեցնի, շատ անգամ մեզ հայերիս վրայ ոչ մի տպաւորութիւն չի թողնում և ընդհակառակը։

Իսկ հայի ժպիտը միշտ բերանին է, տեղի թէ անտեղի. հայը ծիծաղում է համ կամաց, համ բարձր. այնպիսի հայ էլ կայ, որ միշտ ծիծաղում է մի շատ չնչին պատճառով, հայի ծիծաղը եթէ գալու էլ չլինի, քեզ չվիրաւորելու համար կըծիծաղի՝ երբ դու ծիծաղում ես կամ մի անհամ անեկդոտ ես ասում։

Նոյն ժպտերես հայը մէկէլ տեսար իսկոյն դէմքը թթուեցնում ձէթ է դարձնում—հէնց որ փողոցում կամ որևէ հրապարակական վայրում տեսնում է մի վարժապետի, հոգաբարձուի, հայ խմբագրի, գործչի կամ որևէ ընկերութեան վարչութեան անդամի։ Լեղապատառ այն բանից, որ այդ «պատուհաս մարդիկ» որտեղից որ է մի թատրոնի տոմսակ, մի անդորրագիր և չքաւորների օգտին անելիք մի հանրագիր ներկայացնելով պիտի պլոկեն իրենից, ով անգթութիւն, 10 20 դուան դրամ, իսկոյն սկսում է աւելի թթուեցնել դէմքը և մի քանի ոտ փոխ առած, առանց յետ նայելու փախչում է մէկ էլ այդ հոգէառ մարդկանց չհանդիպելու և «կոտր չընկնելու» համար։

Անգլիացին սակայն զոհում է ամեն ինչ, միայն թէ ոյժ տայ լուսաւորութեան, թերթի և գեղարուեստի։ Իսկ հայը անմիջապէս սկսում է շարականներ կարդալ լացաձայն և արտասուախառն, թէ՝ եարմըրկում այսքան մնաս եմ արել, բամբակը չի ծախուել, ուղտի քրահը թանգ է, ապրանքները մնացել են գլխին և այլն։ Եւ այս բոլոր ստերը միմիայն նրա համար, որ գրպանից մի 10զ. ողորմելի գումար չհանի յանուն լուսաւորութեանբարեգործ. մինչդեռ ծոցում 10-նոցները դաբսել է իրար վրայ, որ երեկոյեան կամ կիրակի օրերը թուղթ խաղալու գնայ։ Ահա թէ ով է անգլիացին և ինչ ենք մենք։

Ամենայայտնի իւմորիստները և երգիծաբանները անգլիացիներից են դուրս եկել։ Ամենայայտնի զաւզակները, տափակախօսները հայերից։ Լու

(Կը շարունակուի)

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Նաբաթ փետրուար 25-ին, Լիլաւայի թատերասրահում մի խումբ սիրողներ յօգուտ «Թաւրիզի կանանց միացեալ բարեգործական ընկերութեան» խաղացին «Փարիզի շրջմոլիկը»։

Մի կողմ թողնելով պիեսայի թոյլ և քննադատելի կողմերը և տիպերի թերի ու անըմբռնելի դերը, պէտք է ասել, որ Պ. Գեղամ Աֆթանդիլեանը, որ խաղում էր շրջմոլիկ ժօսէֆի դերը, բաւականի լաւ կերպով տարաւ իւր դերը։ Ունէր համապատասխան գրիմ։ Էլիզայի դերը խաղում էր օր, Փեփրոնէ Նահրաղեանը, որ աւելի լաւ դուրս կբերէր, եթէ անուշադրութեան չմատնէր իր ինչ ընտանիքից լինելը և շարժողութեան ձևերը։ Մօր դերը խաղացող տիկ. Վ. Գրիգորեանը չունէր Քրանսիացի մօր ոչ աշխուժութիւնը և ոչ բոպէական ոգևորութիւնն ու վճռականութիւնը, սակայն երևում էր, որ տիկինը լաւ սիրող է և որոշ դերեր կարող է լաւ դուրս բերել։

Երկրորդ արարուածում աչքի ընկնող դերերից էր ժենեռալ դը Մօրինը, որ խաղում էր պ. Գասպար Յակոբեանը։ Պարոնին յաջողում է նման դերերում ցոյց տալ իր լաւ սիրող լինելու ընդունակութիւնը։

Խաղացուեց և «Պաշտօնս է Խումբալ» վոդվիլը. ուր դարձեալ աչքի էր ընկնում պ. Գեղամ Աֆթանդիլեանը, Լինդօրի դերում։ Այստեղ ուշադրութեան արժանի էին նրա խիստ արագ և վարժ շարժողութիւնները չնայած երբեմն չափազանցութիւններ երևում էին։ Լաւ խաղաց պ. Ս. Մելիք Վարդանեանը Կապիտանի դերը, որ առանձին ոգևորութիւն էր պատճառում միւսներին։ Կար բաւարար հասարակութիւն։ Միակ ցաւալին այն էր, որ երեք գործողութեամբ մի ներկայացում տևեց մինչև ժամի մէկ և կէսը։ Յայտարարուած 20 բոպէ անտրակտները տևում էին մէկ ժամից աւելի, այնպէս որ հասարակութեան մեծ մասը գըրեթէ հեռացաւ խիստ ձանձրացած։ Ներկայացման տպաւորութիւնը ընդհանրապէս բաւարար էր,

Սիրող

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

Ղարադաղի հայ գիւղերի կեղեքիչ խաներին հետզհետէ սանձելու և Եղբ. Թումանեանց գիւղերին հասցրած վնասները յետ առնելու համար ի շնորհակալութիւն՝ թեմիս առաջնորդ Կարապետ եպիս-ը այցելեց Ղարադաղին։ Հանգստեան Սարդար Ռաշիդ-օղլի-Մօլքին Փետրվ. 27-ին, ժամը 4-ին։ Սրբազանին ուղեկցում էր թեմ. խորհրդի անդամ և եղբ. Թումանեանց Ատրպատականի առևտրական տան կառավարիչ պ. Ս. Մել. Սարգսեանը։ Առանձնապէս խոսուել է Ղաշրաման խանին սանձելու և պատժելու մասին, որին առաջ սրբազանը պահանջելիս է եղել, որ բերուի Թաւրիզ։ Սարդարը խոստացել է բաւարարել սրբազանին և գտաի հնթարկել Ղարադաղը կեղեքող խաներին։

Արտաքին գաղութի հոգաբարձուներից պ. Ա. Տէր Կարապետեանը և տեսուչ պ. Ա. Տէր Վարդանեանը երրորդ ան-

գամ գնալով Հաջի Ջօջա էդ-Դովլի ապարանքը՝ ներկայացան նորա եղբօր որդի Մանսուր-էս-Սալթան Նասր էդ-Դովլին, ներկայացրին առաջները մի անգամ տէր Հմայեակի ձեռամբ ներկայացրուած խնդրագիրը և խնդրեցին, որ Հաջի Ջօջա-էդ-Դովլէն հրամանագիր տայ ստանալու դըպրոցին հասանելիք պարսից կառավարական նպաստը—200 թուման։ Նասր էդ Դովլէն ներկայանալով իր հօրեղբօրը բերեց հրամանագիր՝ ուղղուած Ատրպատականի հարկային տեսուչ Մօթամադ-էդ-Սալթանին, որ անօրինէ պատշաճը։ Դպրոցի վարիչները հրամանագիրը տանելով ներկայացրին Մօթամէդ-էդ-Սալթանին, և խնդրեցին նպաստը։ Հարկերի տեսուչը առարկեց, որ այդ առթիւ Թէհրանից պիտի կարգադրութիւն լինի։ Ըստ խնդրանաց ներկայացողների՝ հարկային տեսուչը գրեց մի ընդարձակ հեռագիր Թէհրան՝ ուղղուած պետական գանձուց տեսչին և Ֆինանսների մինիստրին նպաստը տալու առթիւ։ Սպասում է Թէհրանից պատասխանի։ Նոյն օրը, Փետրվ. 26-ին, վերոյիշեալները, երկրորդ անգամ լինելով, ներկայացան Սարդար Ռաշիդ-օլ Մօլքին, խնդրելով հեռապնդել գանելու Իբրահիմ խանին և Հաթամ խանին, որոնք սահմանադրական օրերին դպրոցապատկան գիւղերից հարկ են ստացել, ուրիշ ստացականներ, իսկ գորա ըստացականներն այժմ սարդարը ինքը և Ղարադաղի հարկերի տեսուչ Մօյինը Մաւլիէն անվաւեր են ճանաչում։ Այս առթիւ Ահար արուած էր հեռագիր, սակայն դարձեալ Սարդարը խոստացաւ հետևել և գանել այդ մարդկանց։

Փետրվ. 26-ին «Թ. Հ. Միացեալ Բարեգործական ընկերութիւնը» իր օգտին Լիլաւայի թատերասրահումուց մի ներկայացում, խաղացել են «Փարիզի Երջմուրիկը» և «Պաշտօնս է Խռմիալ»։

Փետրվ. 26-ի երեկոյեան մի պարսիկ կօզակ վիրաւորել է մի թուրքի և սպանել մի ուրիշի։ Մանրամասնութիւնները մեզ պակասում են։

Անսոն խանը փետրվ. 27-ին տէր Հմայեակին կանչելով գրել է տուել իւր կտակը։ Կտակ անողը ի միջի այլոց 10 թմ. նշանակել է աջահամայր առաջնորդին և 10 թմ. էլ տէր հօրը։ Բահանան բազմիցս յիշեցրել է Արամեան դպրոցին կամ եկեղեցուն էլ մի բան, ըստ կամաց, կտակել. բայց բացասուել է։ Փետրվ. 29-ին տէր հայրը կանչուել է Անսոն խանի մօտ. որը յայտնել է, թէ մայր եկեղեցուն կտակում է մի մեծ գահ և 50 թմ. էլ փող։ Անսոն խանը իր տները և ամբողջ կահ կարասիքը կտակել է իր քրոջ որդոց, որոնցից մէկն է Յովհաննէս խան Մասէհեանցը, Բեռլինի պարսից դեսպանը, Զէքսպիրի մի քանի թատերգութեանց հմուտ թարգմանիչը։

Առաջնորդը պահսուայ ընթացքում կերակի օրերը մէկ Ղալայում և մէկ Լիլաւայում տալիս է քարոզներ։ Փետրվ. 26-ին Ղալայում սրբազանը քարոզից լեզուի չարութեան և բամբասանքի մասին։

Անսոն խանը վախճանուեց Մարտ 1-ի առաւօտեան։

ՎԻՊԿԱ

Շօջա-էդ Դովլի Կարապետ եպս-ին այցելելը ոչ թէ տեղի է ունեցել փետրվ. 14-ին, որ սխալմամբ տպուած էր «Միտք»-ի № 2-ի լուրերի բաժնում, այլ փետրվ. 24-ին։

Մարտ 3-ին, շաբաթ իրիկունը, Արամեան դպրոցի թատերասրահում, լուսաւոր նոյն դպրոցի, կիսաղացուի Շիրվանզադէի «Արմենուհի» դրաման։

Արամեան դպրոցը դրամական ծանր ճգնաժամի մէջ է։ Հոգաբարձութիւնը, բացի սրբազանի միջոցով յիշեցումներ անելուց, Նոյեմբեր 12-ին մի երախտագիտական խնդրագրով էլ անմիջապէս դիմում էարել իրեն հիւպատոս պ. Միլլերին ստանալու Ռուսաց կառավարութեան նպաստը, որ այժմ հասնում է 1425 բուբլու։ Ապա օգտուելով պ. Զ. Նազարբեգեանի Թիֆլիսում գտնուելուց, լուսնվ. 9 թիւ մի նամակով էլ դիմեց նորան, որ նա բարեհաճի միջնորդել գեներալ Կախանովսկու առաջ՝ յիշեալ նպաստը ուղարկելու մասին։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Ղարադաղ

Ահարից՝ պ. Սարգիս Յովնանեանից և Քէյվանի գործակալից ստացուած գրութիւնները պարզում են, որ Ռուստամ խանի Քէյվանի հայերին պատճառած վնասների հանդէպ որոշուած է ստանալ 2000 թուման զուտ դրամ և մօտ 2000 թումանի անասնեղէն և նիւթեղէն։ 500 թուման կանխիկ ստացուած է, իսկ 1500 թումանի համար երկու շաբաթուայ ընթացքում վճարելու պայմանով՝ ստորագրութիւն է տուել և մնացածի համար երաշխաւորել է Քեալագբարի խան Սուլջաալմամալիքը։

Քանի որ Քէյվանցիք ստիպուած էին այս վնասներն ստանալու համար իրենց տները վերադառնալ, և մինչև նորից Ահար գային ու կարողանային այնտեղից Թաւրիզ դիմել Քեարիմ խանի դէմ իրենց դատը շարունակելու համար, բաւական ժամանակ պիտի անցներ, Ռաշիդ—իւլ—միւլք սարդարի առաջարկութեամբ լաւ համարուեց այս դատի համար ևս միջնորդ-հաւատարմատար կարգել պ. Ս. Յովնանեանին, որ Ահարում Քեարիմ խանի որդու, Նուրուլլահ խանի հետ որոշ համաձայնութեան գան, և երբ հայերն իրենց բոլոր պահանջների գոհացում ստանան, այնտեղից հեռագրուի, որ նոր կարելի լինի Քեարիմ խանին ազատ թողնել այստեղից։

Մակու

Հաստատ աղբիւրից տեղեկանում ենք, որ Խոյ, Սալմաստ և Ուրմի գրուում են Մակուի Սարդար Իգբալը-Սալթանէի իշխանութեան ներքոյ։ Խոյի համար արդէն փոխ-նահանգապետ ուղարկուած է. Սալմաստի և Ուրմիոյ համար ևս շուտով կուղարկուեն՝ սարդարի ազգականներից ու մերձաւորներից։

ԱՐՏԱՔԻՆ

Թուրքաց կառավարութիւնը յատկացրել է 100,000 ոսկի հայերի Հայաստանում ունեցած հողի հարցը վերջացնելու համար։ Ցայտնի է թէ Հայկական կոտորածների ժամանակ, երբ հայերն գաղթեցին, կամ փախան իրանց հողերից, քիւրդ աղաները տիրեցին նրանց հողերին։ Կառավարութիւնը մտադիր է այդ հողերը քրդերից առնել և յանձնել հայերին. բայց որպէսզի քիւրդ աղաներն էլ չվնասուեն այդ գործում կառավարութիւնը այդ 100000 ոսկուց պիտի վճարի քիւրդ աղաներին հողերի արժէքը։ Բայց ասում են որ դա մի մանօվրէ, որ գործադրում է Միութիւն և յառաջադիմութիւն կօմիտէն։ Թիւրքաց պարլամենտի ընտրութիւնները մօտենում են. Մ. և Յ. կօմիտէն այդ ձարպիկ մանօվրով ուզում է իր կողմը գրաւել հայերին, որպէսզի հայերը իրենց քուէները տան Մ. և Յ. կօմիտէի անդամներին։ Կօմիտէն խոստանում է նաև մեծամեծ բէֆօրմեր մտցնել հայկական նահանգներում։ Աւելորդ է ասել որ՝ ընտրութիւններից յետոյ հայերի և հայաստանի վիճակը կմնայ նոյնը ինչ որ եղել է, թերևս աւելի վատթար։ Մինչև որ ժէոն Թիւրքերը Թուրքիոյ զանազան ազգերի իրաւունքը և հաւասարութիւնը չըմբռնեն և չճանաչեն, Թիւրք կայսրութիւնը չի կարող բարեկարգուել։ Սա մի ճշմարտութիւն է որ շովինիստ Թուրքերը պէտք է լաւ հասկանան։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 2-ին Սարդար Ռաշիդ օլ-Մօլքը եկաւ Կար. սրբազանի փոխայցելութեան։ Խօսուել է, որ կրկին չառնուի դպրոցապատկան գիւղերի 127 թմ. արդէն վճարուած տուրքը։

Յառաջիկայ շաբաթ օրը Ղալայում յօգուտ դպրոցի կիսաղացուին «Բռնի Ամուսնութիւն և «Ադամ և Եւա» կատակերգութիւնները շատէժանացրած գներով։

Ցայտարարութիւններն այսուհետև կտպուին ա. երեսում 5 շահի, չորրորդ երեսում 2 շահի։

Խմբագիր—հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄԱԳԱԶԻՆԸ ՄԱՐԻԺԸ"

Propriétaire J. D. Thomassian

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Ամեն շաբաթ ստացում են Եւրոպական առաջնակարգ ֆաբրիկաներից ամենաճոխ նորութիւններ կալանթերիի և արդ ու զարդի վերաբերեալ։

ՏԻԿԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ—պալտօներ, մահմար. շալ և բատիստ. կարուած և կիսակար բլուզներ, իւպկաներ և ամեն չափի կորսէթներ։

ՊԱՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ—սէզօնի և կիսասէզօնի պալտօներ 50—120 դրան. կաստիումներ 70—120 Ղրն. բրդէնկօթ 60 դրն.-ից, շալվար 14—15դրն. ֆանթէզի ժիլէթներ 17—45 դրն. շապիկների, բօլէրի, մանշէթների և քրավաթների մեծ քօլլէքցիա։

ՏՂԱՆԵՐԻ ԿՕՍՏԻՈՒՄՆԵՐ 4—10 տարեկան 20—35 դրն.

ԵՂՋԻՐՆԵՐԻ ՋԻԼՍՏՆԵՐ 3—10 տարեկան 25—60 դրն.

Գլխի սանդրների և սարքերի, բեղիքիլների, փօրտմանների և պայուսակների մեծ քօլլէքցիա, խաչեր, խաղալիքներ ամեն տեսակի և ամեն արժէքի. լիքօրի կարնիվիւրներ, սեղանիկներ թէյի և պապիրոսի համար ծալովի, փէջէնների, կանֆէթի և վարէնների հրաշալի վազեր. երեխաների ծալովի կառքեր և աթոռներ, սեղանի կլիօնկա արշինով և հատով, ամեն լայնքի և կլիօնկա կրծկալ երեխաների. սենեակի և կօրիդօրի համար լինօլէօմ։ Յառաջիկայ սէզօնի օյմացու հրաշալի կտորներ և բլուզացու։

ՌՈՍԻՐՈՍՏԻ կանացի մահմար և մետաքս գլխարկների, որոնք վաճառում են սովորականից 50 % զեղչով. տևում է միայն 15 օր, շտապեցէք օգտուել հանգամանքից։

Գաւառներից պատուէրներ կընդունի և ամենայն խնամքով կկատարի և քանակութեան համաձայն արժէքներ կտայ։

ՄԱՆՈՒԿ ՄԱԶՄԱՆԵԱՆԵՐԸ ԵԿ.

ԿԱԼԲԱՍ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ

Ալէքսանդրապոլում և Թիֆլիսում յայտնի մեր պատրաստած և մեծ ընդունելութիւն գտած կալբասով։ Թաւրիզում (Ղալա թաղում) արդէն բացել ենք գործարան, որտեղից ամեն օր պատրաստում և արտադրում են միանգամայն թարմ կալբաս սալդիսոն, սասիսկա, վիչինա եւ այլն։

Ունինք Ռուսաստանում պատրաստուած ամեն տեսակի խմիչքներ չափազանց մատչելի գներով, որպիսիք չէք գտնի ոչ մի մագազինում։ Ունինք իսկական կախեթու և այլ տեսակի ընտիր գինիներ, որոնք չեն ծախուում Թաւրիզի գինիների առասպելական թանկ արժէքներով. թարմ գարեջուր և ամեն տեսակի ռուսական զիւսկեղէնեներ։ Ծախում են և կրիբինեներ, ժան սարդինները։ Եկէք և գնեցէք թարմ, ժան և ընտիր ապրանքներ և դուք մեզ չէք մոռանայ։ կալբասի ռուսական ֆունտը 30 կ. (33 շահի). մեր գործարանը լուսանկար Ստեփան Ստեփանեանի նոր խանութներում, Գ. Սիլիոնի տան մօտ, բողոքականների աղօթարանիկողը։ Ունինք շիրբախտի իւղ գրվ. 2ղ. 10 շհ. և կոնսերվներ։

ԳԱՐՈՒՆ

(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍԱԿ ԲԺԶԿԵԱՆԻ)

Ամեն մրցումից վեր են և չափազանց ճաշակաւոր Գերմանիայից նոր ստացուած մեր գարնանային վերարկուները, տղամարդկանց վիզիտկաները, ճանսազիայ ժիլետները, ամառային ժակետները և երեխաների հագուստները ու գլխարկները։ «Գարուն»-ին դիմողները գոհ պիտի մնան։ «Գարուն»-ում ժան գնով կարելի է ձեռք բերել կանացի շալեր և սպիտակեղէններ, դպրոցական աղջիկների հագուստի կտորներ և այլն։

ԳՈՒՐԱՆ[1]

Մուհամմէդի Գուրանին հայերէնը լոյս տեսաւ Վառնայի «Իրաւունք» տպարանէն։

Գինն է 2 բուբլի կամ 5 ֆրանկ

Նոյն տպարանէն կստացուին նաև հետևեալ գրքերը.

Թիապարտը. Ա. Բ. և Գ. մասերը ամբողջ 3 ֆր.
Կարմիր ծամուց. հայ իրական կեանքէ 1 ֆր.
Կարիպ Ախպեր հայ վէպ յոյժ շահեկան 1 ֆր.
Ազատ Երգարան. հին և նոր ազգային երգեր 1 ֆր.
Նէտա. Պուլկարաց նախկին վիճակէն. 50 սանթիմ
Պուլկարաց պատմութիւն մինչև մեր օրերը 50 սանթ.

Փոխարէնը ղրկել ռուսական թղթադրամ այս հասցէով

Imprimerie «Iravounk» Varna (Bulgarie)

1) Պարսկերէնում և Արաբերէնում արտասանուում է «Ղօրան»։ Ծ. խմբ.